ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ք.Եղեգնաձոր 27 ապրիլի 2017թ.

Վայոց ձորի մարզի վիրուսային, մասնավորապես՝ արտաընդերային ճանապարհով փոխանցվող հեպատիտների կանխարգելման հանձնաժողովի նիստի

Նիստի աշխատանքներին մասնակցում են՝

Փոխմարզպետ, հանձնաժողովի նախագահ Մ.Հարությունյանը

հանձնաժողովի անդամներ՝

Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Խ.Գևորգյանը, ՀՎԿԱԿ ՊՈԱԿ Վայոց ձորի մասնաճյուղի բժիշկ-համաճարակաբան Ե.Շիրինյանը, <<Վայքի ԲՄ>> ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ Ա.Գալստյանը, <<Եղեգնաձորի ԲԿ>> ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ Կ.Ասատրյանը, <<Վայքի ԲՄ>> ՓԲԸ-ի ինֆեկցիոն բաժանմունքի վարիչ Է.Հանիսյանը, ԱՊՏ Վայոց ձորի մարզային կենտրոնի բժիշկ-համաճարակաբան Բ.Ծերունյանը, ԱՊՏ Վայոց ձորի մարզային կենտրոնի բժիշկ-համաճարակաբան Հ.Խաչատրյանը, մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առաջատար մասնագետ Հ.Սարգսյանը /քարտուղար/:

Նիստին հրավիրված են՝

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հ.Սարգսյանը, <<Վայքի ԲՄ>> ՓԲԸ-ի տնօրեն Ռ.Ասլանյանը, <<Եղեգնաձորի ԲԿ>> ՓԲԸ-ի տնօրեն Ա.Կարապետյանը, ԱԱՊԿ-ների տնօրենները:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Մարզում արտաընդերային ճանապարհով փոխանցվող վարակների կանխարգելման ուղղությամբ տարվող աշխատանքների ներկա վիճակի և միջոցառումների՝ հատկապես, գյուղական բժշկական կազմակերպություններում այն բարելավելու ուղղությամբ:
2. Ընթացիկ հարցեր և առաջարկություններ:
3. Հանձնաժողովի նիստի ամփոփում:

Լսեցին՝

1. Հանձնաժողովի նիստը ղեկավարեց ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը՝ ներկայացրեց օրակարգում ընդգրկված հարցերը:

Արտահայտվեցին՝

ՀՎԿԱԿ ՊՈԱԿ Վայոց ձորի մասնաճյուղի բժիշկ-համաճարակաբան Ե. Շիրինյանը: Նշվեց, որ ինչպես 2016թ. -ին, այնպես էլ 2017թ. Վայոց ձորի մարզում ներհիվանդանոցային վարակներ չեն հայտնաբերվել, մարզում հեպատիտ Բ-ի և Ը-ի

հիվանդացության մակարդակը ցածր է միջին հանրապետականից, <<Եղեգնաձորի ԲԿ>> ՓԲԸ-ում և <<Վայքի ԲՄ>> ՓԲԸ-ում բավականին լուրջ աշխատանքներ են տարվել վարակների կանխարգելման ուղղությամբ, սակայն դեռևս կան բացթողումներ և թերություններ, հատկապես մարզի առողջության կենտրոնում և ԱԱՊԿ-ներում:

Քննարկվող հարցերի շուրջ արտահայտվեցին <<Վայքի ԲՄ>> ՓԲԸ-ի տնօրեն Ռ.Ասլանյանը, <<Եղեգնաձորի ԲԿ>> ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ Կ.Ասատրյանը, ԱՊՏ Վայոց ձորի մարզային կենտրոնի բժիշկ-համաճարակաբան Բ.Ծերունյանը,<<Ջերմուկի ԱԿ>> ՓԲԸ-ի տնօրեն Մ.Նալբանդյանը, Մալիշկայի, Արենիի ԱԱՊԿ-ների տնօրենները:

Ամփոփելով հանձանժողովի նիստի աշխատանքերը մարզպետը ողջունեց կատարված դրական աշխատանքերը Վայքի ԲՄ-ում և Եղեգնաձորի ԲԿ-ում, միաժամանակ քննարկվեց ԱԱՊԿ-ներում և առողջության կենտրոնում կատարված ոչ բավարար աշխատանքները և հանձնարարվեց ամենակարճ ժամկետում վերացնել թերությունները:

Հանձնաժողովի նախագահ՝ Մ.Հարությունյան

Քարտուղար՝ Հ. Սարգսյան